

2017թ. խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 1086 հարկ վճարողների ամփոփ ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ընդգրկված են Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2017թ.-ի ընթացքում սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 1086 հարկ վճարողների 2017 և 2016 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2017թ. երրորդ եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 1384.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ աճելով 10.8%:
2. Ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել են 24.9 %-ով և կազմել 381.5 մլրդ դրամ:
3. Արտահանման ծավալները աճել են 24.4 %-ով և կազմել 231.7 մլրդ դրամ:
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2017թ.-ի երրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 54.7 մլրդ. դրամ, որից ԱԱՀ-ն կազմել է 38.6 մլրդ դրամ:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի առումով 2017թ.-ի երրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 128.4 մլրդ. դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների կողմից 2017թ.-ի երրորդ եռամսյակում վճարվել է հանրապետությունում հավաքագրված հարկային եկամուտների 59.5 %-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են 216 հարկային ստուգումներ, այդ թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության 70 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարներ 1.5 մլրդ. դրամի չափով:
7. 01.10.2017թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 150.7 մլրդ դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 101.8 մլրդ դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 10.1 մլրդ դրամ: Նշված ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների

գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 13.1 մլրդ դրամի չափով, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 2.0 մլրդ դրամի չափով:

8. Աշխատողների միջին ցուցակային թիվը դիտարկվող ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է է 3.4%-ով, իսկ մեկ աշխատողի միջին ամսական ԱՎՈՒՄ-ը աճել է 2.5%-ով և կազմել 216 հազար դրամ: